

- 95 զմայլիլ ազնիւ հոտոյն. որպէս երբեմն ի վեր-
նատուն զասք առաքելոց: Եւ այնպէս ցան-
կալի էր եւ տենչալի վայրքն, զի ոչ կամէր
հեռանալ մարդ ի տեղօջէն, այլ միշտ եւ հա-
նապազ ծառայել եւ սպասաւորել, որպէս ի
- 100 լեառն Թափօր այլակերպութեան օրն ոչ կա-
մէին (առաքեալքն) մեկնիլ, այլ աղաչէին
դՏէրն ասելով. Արասցուք երիս տաղաւարս.
նոյնպէս եւ աստ մտեալքն այլ ոչ կամէին ի
դուրս գնալ: Իսկ բազմամբոխ ժողովուրդն որ
- 105 կային եւ սպասէին մեծաւ բաղձամբ եւ
ըզձիւ՝ որպէս փեսայ հարսին, եւ կամ ոք սի-
րեցեալ հեռաւորին: Եւ տեսեալ զյամեւն մեր
անդր՝ մտեալ ի ներս քարչէին ի դուրս մինչ
զի զօձիս եւ զթեզանիս պատառէին եւ զմօ-
- 110 բուս ճողէին եւ զերեսս վիրաւորէին. եւ ոչ
կարէին շարժել. զի բոլոր անձամբ անկեալ
ջերմ եւ անյազ սիրով՝ կալեալ երկոսին ձե-
ռօք զկենսաբուխ սուրբ գերեզմանն, որպէս
ոք ծարաւի եւ պասքեալ յաղբերս ջուրց, կամ
- 115 սովալլուկ ոք հաց գտեալ: Իսկ որք մեծ սէր
եւ փափագ ունէին՝ աղաղակէին. Աստ բնա-
կեցայց, աստ կեցից եւ աստի ոչ մեկնեցայց
մինչեւ ի մահ: Ապա դան եասախչիք եւ հա-
րազանօք հաղիւ հանեն ի դուրս հարկանե-
- 120 լով. ասեն. Ելէք ի դուրս, զի եւ այլք մաս-
նակից լիցին, զի վասն ամենեցուն է նա եւ ոչ
ձեզ միայն: Եւ աղօթեալ մեզաց թաղութիւն
խնդրեցաք մեզ եւ մեր ծնողաց եւ երախտա-